ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2015 թվականի N 107-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013Թ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 18-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012թ փետրվարի 17 -ի N 143-Ն և 2015թ ապրիլի 1-ի N 177-Ն հրամանների պահանջների, որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013թվականի փետրվարի 28-ի << Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ներքին աուդիտի կանոնակարգը, աուդիտի ենթակա միավորների ցանկը, ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթը, ռիսկերի գնահատման տեղեկագիրը և ռիսկերի վերլուծության նպատակով կիրառվող չափորոշիչները հաստատելու մասին>> N 18-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1))Որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6)-րդ ենթակետով.
<<6) Ներքին աուդիտի ստորաբաժանման համապատասխանության գնահատման ձևանմուշը համաձայն N 6 հավելվածի:>>

2)որոշման N 1 հավելվածը լրացնել նոր՝ 51.1. կետով.
<<51.1 Ընդ որում, գնումների գործընթացի կազմակերպման մասով անհրաժեշտ է նախատեսել, որ գնումների համակարգողը գնման ընթացակարգի արձանագրությունը հաստատվելուն, իսկ պատասխանատու ստորաբաժանումը հանձնման-ընդունման արձանագրությունը, իսկ ապրանքների դեպքում նաև պահեստ մուտքագրման օրդերի պատճենները կազմելուն հաջորդող աշխատանքային օրը գրավոր տրամադրում են ներքին

պատճենները կազմելուն հաջորդող աշխատանքային օրը գրավոր տրամադրում են ներքին աուդիտի ստորաբաժանմանը:>>

2.4 << Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին.ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

<< ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2016թ.օգոստոսի 11
ք. Կապան

Հավելված 6

ՀՀ Սյունիքի մարզպետի

2015թ.օգոստոսի 11-ի թիվ107-Ա որոշման

Ձևանմուշ ներքին աուդիտի ստորաբաժանման համապատասխանության գնահատման

Մաս 1

Աուդիտի առաջադրանքի արդյունավետության գնահատում
աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից

Մարզպետի կարգադրության համարը_____
Աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավար _____
Աուդիտի ենթարկվող, միավոր _____
Ամսաթիվը _____

Յուրաքանչյուր հարցի համար նշվում է միայն մեկ պատասխան՝
4= Գերազանց, 3 = Լավ, 2 = Բավարար, 1 = Վատ

N	Գնահատման տարրեր	Գ	Լ	Բ	Վ
1	Առաջադրանքի յուրաքանչյուր նպատակի իրագործման համար մշակվե՞լ է աուդիտի աշխատանքային ծրագիր:	4	3	2	1
2	Աշխատանքային ծրագիրը արդյունավետ կերպով անդրադառնու՞մ է ռիսկային ոլորտներին և բավարա՞ր է ներքին հսկողության կիրառվող համակարգերի արդյունավետությունը գնահատելու համար:	4	3	2	1
3	Աուդիտի աշխատանքային ծրագիրը և համապատասխան աշխատանքների շրջանակը ճշգրտվե՞լ է՝ ելնելով փաստացի պայմաններից:	4	3	2	1
4	Աուդիտի կազմակերպման ժամանակ, գործուղման պահանջագրերը, հրամանները և այլ կազմակերպման պայմանավորվածությունները կատարվու՞մ են նախապես՝ աուդիտի ժամանակի կորուստը նվազագույնի հասցնելու նպատակով:	4	3	2	1
5	Աշխատանքային փաստաթղթերը պարունակու՞մ են համապատասխան հղումներ իրավական ակտերին:	4	3	2	1
6	Առաջադրանքի աշխատանքը կատարվե՞լ է, և բոլոր աշխատանքային փաստաթղթերը ներկայացվե՞լ են ժամանակին:	4	3	2	1
7	Առաջարկություններում անդրադարձ է կատարվու՞մ պատճառներին:	4	3	2	1
8	Հայտնաբերված թերացումների ցանկը հաստատվել և ամփոփ	4	3	2	1

N	Գնահատման տարրեր	Գ	Լ	Բ	Վ
	ներկայացվ՞ել են աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարությանը:				
9	Արդյո՞ք աուդիտի աշխատանքային փաթեթը (աուդիտի աշխատանքային ծրագրեր, աշխատանքային փաստաթղթեր, հաշվետվություններ, և այլն) բավարարո՞ւմ է նախատեսվող ընթերցողին և հստակ հաղորդում են խնդրի էությունը:	4	3	2	1
10	Նախնական հաշվետվությունների քննարկման և վերջիններիս աուդիտի ենթարկվող միավորի կողմից տրվող նախնական պատասխանների տրամադրման ժամկետները պահպանվե՞լ են:	4	3	2	1
11	Առաջադրանքը նպաստե՞լ է կազմակերպության համար արժեքի ավելացմանը:	4	3	2	1
	Ընդամենը՝				
	Միջին գնահատականը				

Լրացուցիչ մեկնաբանություններ

_____

_____

Գնահատող _____ Ստորագրություն _____

Մաս 2

Առաջադրանքի իրականացման որակի վերաբերյալ ստուգաթերթ՝ տրված աուդիտի ենթարկվող միավորի կողմից

Մարզպետի կարգադրության համարը_____

Աուդիտի առաջադրանքի աշխատնաքային խմբի ղեկավար

Աուդիտի ենթարկվող միավոր_____

Ամսաթիվը_____

Յուրաքանչյուր հարցի համար նշվում է միայն մեկ պատասխան՝

4= Գերազանց, 3 = Լավ, 2 = Բավարար, 1 = Վատ

N	Գնահատման տարրեր	Գ	Լ	Բ	Վ
1	Ստացե՞լ եք արդյոք առաջադրանքի մասին տեղեկացնող ծանուցում նախքան առաջադրանքի մեկնարկը:	4	3	2	1
2	Արդյո՞ք սկզբնական հանդիպումն անցկացվել է նախքան առաջադրանքի մեկնարկը կամ այն սկսելուն զուգահեռ:	4	3	2	1
3	Արդյո՞ք սկզբնական հարցազրույցի ժամանակ Ձեզ հետ քննարկվել են առաջադրանքի նպատակները, շրջանակները, ժամկետները և կազմակերպչական այլ հարցեր:	4	3	2	1

N	Գնահատման տարրեր	Գ	L	Բ	Վ
4	Դուք տեղեկացվե՞լ եք առաջադրանքի ժամկետների փոփոխություններին:	4	3	2	1
5	Արդյո՞ք աուդիտորներն արագ են արձագանքել Ձեր աշխատանքային իրավիճակի առանձնահատկություններին:	4	3	2	1
6	Արդյո՞ք առաջադրանքի ընթացքում Դուք պարբերաբար տեղեկացվել եք էական հարցերի մասին՝ դրանց զարգանալուն զուգընթաց:	4	3	2	1
7	Արդյո՞ք Ձեզ տրամադրվել է նախնական հաշվետվության կրկնօրինակը՝ եզրափակիչ հանդիպումից առաջ:	4	3	2	1
8	Արդյո՞ք Դուք կամ Ձեր աշխատակազմի հիմնական անդամները մինչ նախնական հաշվետվության տրամադրումը տեղեկացվել եք ամփոփված բոլոր էական հարցերի մասին:	4	3	2	1
9	Արդյո՞ք եզրափակիչ հանդիպման ընթացքում Ձեզ հետ քննարկվել են ստացված արդյունքները պատշաճ մանրամասնությամբ:	4	3	2	1
10	Արդյո՞ք եզրափակիչ հարցազրույցի ժամանակ քննարկվել են առաջադրանքի ընթացքում հայտնաբերված բոլոր թերությունները:	4	3	2	1
11	Արդյո՞ք Ձեր պատասխանները (կամ պատասխանելու ցուցումները) քննարկվել են եզրափակիչ հանդիպման ժամանակ:	4	3	2	1
12	Ձեր կարծիքով այս առաջադրանքն որքանով է նպաստել ձեր աշխատանքային գործառույթների համակարգմանը:	4	3	2	1
	Ընդամենը՝				
	Միջին գնահատականը՝				

Ի՞նչ փոփոխություններ կառաջարկեիք կատարել աուդիտի մեր գործընթացը առավելագույնս կատարելագործելու համար:

1. _____
2. _____
3. _____

Լրացուցիչ մեկնաբանություններ

Գնահատող՝ աուդիտի միավորի ղեկավար_____

Ստորագրություն _____